2.2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ
26.08.2021-27.09.2021

Ներածություն

Գրեթե քառասուն տարի առաջ Իրանն աշխարհի ամենադինամիկ տնտեսություններից էր, տարածաշրջանի ամենազարգացած երկիրը: Ամեն ինչ փոխվեց 1979 թվականի իսլամական հեղափոխությունից հետո. միջազգային մեկուսացումը երկիրը հանգեցրեց տասնամյակների անկման:

Արդիականություն: Երկրի աշխարհաքաղաքական դիրքով և առանձնահատկություններով պայմանավորված՝ տնտեսության վրա պետական ազդեցության մեթոդների ձևավորման պատմությունը ժամանակի ընթացքում չի կորցնում իր արդիականությունը: Տնտեսական զարգացման գործում պետության դերի խնդիրը չափազանց արդիական է ոչ միայն Իրանի, այլև հարևան երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար:

Նպատակը: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել տարբեր պատմական ժամանակաշրջաններում պետության կողմից կիրառվող այն գործիքակազմերը, որոնք նպաստել են երկրի գիտության ոլորտի զարգացմանը, ինչպես նաև մշակել ՀՀ համար համապատասխան կիրառական առաջարկներ:

Խնդիրները: Նշված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել Իրանում տեղի ունեցած տնտեսաքաղաքական գործընթացներն ու դրանց ազդեցությունը երկրի զարգացման վրա,
- ✓ վերլուծել պետության կողմից կիրառվող և գիտության ոլորտի զարգացմանը նպաստող միջոցառումներն ու վեր հանել դրանց առանձնահատկությունները,
- ✓ բացահայտել ու հիմնավորել ՀՀ-ում դրանց կիրառման կարևորությունն ու հնարավորությունները:

Գրականության վերլուծություն: Դարեր շարունակ տեղի ունեցած տնտեսական բարեփոխումները պատճառ են հանդիսացել, որպեսզի Իրանը մշտապես լինի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Մեծամասամբ դա պայմանավորված է նաև Իրանի աշխարհաքաղաքական դիրքով, որն իր ազդեցությունն է ունենում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական գործոնների, տնտեսական գործընթացների վրա:

Իրանի Իսլամական Հանրապետության մասին բավականաչափ աշխատանքներ ունի Ն. Մ. Մամեդովան: Նա իր աշխատանքներում հետաքրքիր կերպով ներկայացրել է երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձու-

թյունների ազդեցությունը տնտեսության վրա: Հատկանշական է «Իրանը 20-րդ դարում: Պետության դերը տնտեսական զարգացման գործում» մենագրությունը, որում հեղինակը պատմական տեսանկյունից ներկայացրել է պետության և տնտեսության միջև հարաբերությունները, ինչպես նաև պետության ազդեցությունը տնտեսական զարգացման գործիքակազմերի ձևավորման գործում[1]:

Հիմնարար ուսումնասիրություն է ներկայացնում նաև Ա. Զ. Արաբաջյանի «Իրանի Իսլամական Հանրապետություն. Տնտեսական ներուժ. 90–ականների առաջին կես» մենագրությունը[2]: Մենագրությունը պարունակում է շուկայական մեխանիզմների անցման առաջին հինգ տարիների Իրանի զարգացման մանրամասն մակրոտնտեսական վերլուծություն, որը պատկերացում է տալիս ազատականացման քաղաքականության առանձին տարրերի և դրա իրականացման արդյունավետության մասին:

Հետաքրքրական են նաև Ա. Սուֆիի, Մ. Գոդարզիի և Ս. Ղազինուրիի հեղինակած աշխատանքները, որոնցից թեմայի շրջանակում ուսումնասիրվել են «Գիտության և տեխնոլոգիաների զարգացումն Իրանում. Քաղաքականություն և ուսումնասիրության շրջանակներ» և «Գիտությունն ու նորարարությունները Իրանում. Զարգացում, առաջընթաց և մարտահրավերներ» աշխատությունները: «Գիտության և տեխնոլոգիաների զարգացումն Իրանում. Քաղաքականություն և ուսումնասիրության շրջանակներ» գրքում հեղինակները ներկայացրել են գիտությանն ու տեխնոլոգիաներին վերաբերող օրենքները, Իրանում գիտելիքի կառավարման ռազմավարությունները, ինչպես նաև ուսումնասիրել են գիտական հրապարակումներին վերաբերող վիճակագրական տվյալներն ու վեր են հանել դրանց աճին նպաստող հիմնական գործոնները[3]: «Գիտությունն ու նորարարությունները Իրանում. Զարգացում, առաջընթաց և մարտահրավերներ» աշխատության մեջ հեղինակները ներկայացրել են բարձրագույն կրթական համակարգի զարգացումից մինչև գիտելիքահենք տնտեսությանն անցում կատարելու միջև ընկած ժամանակաշրջանը, ուսումնասիրել են Իրանի կառավարության կողմից գիտության և տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված գործիքակազմերն ու դրանց արդյունավետությունը[4]:

---

[1] Мамедова Н. М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, 144 с. ISBN 5-89394-007-5

[2] Арабаджян А. З., Исламская Республика Иран : Эконом. потенциал: первая половина 90-х г.: (Со стат. обозрением второй половины десятилетия и общ. характеристикой Третьего плана развития ИРИ: 2000/01-2004/05 гг.) / А. З. Арабаджян; Рос. акад. Наук, Ин-т востоковедения. М.: Вост. лит., 2002, 382 с. ISBN 5-02-018307-5 (в пер.)

[3] Soofi, A. S. & Goodarzi, M. (Eds.). (2017). The Development of Science and Technology in Iran: Policies and Learning Frameworks. New York, NY: Palgrave Macmillan, 302 p. doi:10.1057/978-1-137-57257-8

[4] Soofi, A. S., & Ghazinoory, S. (Eds.). (2013). Science and Innovations in Iran. Development, Progress,

Մ. Ղոդսիի, Վ. Աստրովի, Ռ. Գրիվեսոնի ու Ռ. Ստեհրերի հեղինակած «Իրանի տնտեսությունը. Մարտահրավերներ և հնարավորություններ» աշխատանքում հեղինակները պատմական ակնարկ են կատարել Իրանի տնտեսական զարգացմանը՝ սկսած դեռևս 1970–ական թվականներից: Ներկայացրել են Իրանի տնտեսության համար առանցքային համարվող տնտեսական և կառուցվածքային ցուցանիշները, ինչպես նաև ուսումնասիրել են երկրի վարած արտաքին քաղաքականության առանձնահատկությունները, պատժամիջոցների ու մեկուսացման դերն ու հետևանքները[1]:

Իր աշխատանքներում Իրանում տեղի ունեցած քաղաքական գործընթացներին ու դրանց տնտեսական հետևանքներին է անդրադարձել նաև ռուս հետազոտող, քաղաքական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Զոտինը: Զոտինն իր «Իրան. Մեկուսացման պտուղները» աշխատանքում ըստ ժամանակագրության ներկայացրել է երկրում տեղի ունեցած հեղափոխությունները, ինչպես նաև այդ ընթացքում իրականացված տնտեսական բարեփոխումները: Ուսումնասիրել և վերլուծել է Իրանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, երկրի վարած քաղաքականությունն ու զարգացումն արդեն պատժամիջոցների վերացումից հետո[2]:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև Ա. Նասիրբեյկի, Ա. Ի. Դեմինի և ուրիշների հոդվածներն ու ուսումնասիրությունները[3]:

Մեթոդաբանություն: Սույն հետազոտության շրջանակում օգտագործվել են գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները:

Վերլուծություն

Այսօրվա Իրանում շատ իրադարձություններ կապված են երկրի քաղաքական կյանքի առանձնահատկությունների հետ, որոնք բացատրվում են նրանով, որ քսաներորդ դարի սկզբից Իրանը թևակոխել է հեղափոխությունների և հեղաշրջումների ժամանակաշրջան: Ավտորիտար կառավարման համակարգ ունեցող երկրներում բողոքի զանգվածային շարժումները գործնականում դարձել են տիրող իրավիճակի վրա ազդելու հիմնական գործիքակազ-

---

and Challenges. New York, NY: Palgrave Macmillan, 259 p. doi:10.1057/9781137030108

[1] Ghodsi, M., Astrov, V., Grieveson, R. and Stehrer, R. (2018). The Iranian Economy: Challenges and Opportunities. wiiw Research Report No. 429, Vienna: The Vienna Institute for International Economic Studies. 63 p. Available at: https://wiiw.ac.at/the-iranian-economy-challenges-and-opportunities-dlp-4599.pdf (last accessed: September 15, 2021)

[2] Zotin, A. (2017) Iran: The Fruits of Isolation. In Movchan, A., Zotin, A., and Grigoryev, V. (eds.), Managing the Resource Curse Strategies of Oil-Dependent Economies in the Modern Era, pp. 80-89, Moscow, Russia: Carnegie Moscow Center. Available at: https://carnegieendowment.org/files/Movchan_Report_Final_Print.pdf (last accessed: September 15, 2021)

[3] Демин, А.И. Современная иранская деревня: (Основные проблемы соц.-экон. развития) / АН СССР. Ин-т востоковедения. Москва : Наука, 1977. 278 с.; Насирбейк Анахита, Этапы развития экономики Ирана, Горизонты экономики, ISSN: 2219-3650, Москва, номер 6 (53), 2019, стр. 61-66.

մերից մեկը: Այդ ամենը որոշ չափով, որպես իրանական հասարակության մտածելակերպի մի մասնիկ, վերածվել է պատմական ավանդույթի:

Իրանական առաջին հեղափոխությունը տեղի է ունեցել 1905-1911 թվականներին, որի արդյունքում ընդունվել է երկրի սահմանադրությունը: Չանցած մի քանի տարի՝ երկրում կրկին մոլեգնում են սոցիալական փոթորիկները: 1921 թվականին պատմական թատերաբեմում է հայտնվում Ռեզա Խանը, ով գրավում է Թեհրանն ու դառնում՝ ռազմական նախարար: Տեղի ունեցած ռազմական հեղաշրջման արդյունքում 1925 թվականին տապալվում է Ղաջարների տոհմն, ու հաստատվում են Փահլավիները: Նավթային արդյունաբերության աղգայնացմանն ուղղված շարժումը սկիզբ է առել 1950 թվականին, որն էլ ավարտվել է 1953 թվականին՝ կրկին ռազմական հեղաշրջմամբ[1]:

Իրանի ժամանակակից պատմության սկիզբը կարելի է համարել 1963 թվականը, երբ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին սկիզբ է դնում իր արմատական տնտեսական և սոցիալական բարեփոխումների ծրագրին՝ «Սպիտակ հեղափոխությանը»: Հիմնական տնտեսական վերափոխումները ագրարային բարեփոխումներն էին, որոնց շարքին կարելի է դասել տեղական ճորտատիրության փաստացի վերացումը, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավման միջոցով արդյունաբերականացման գործընթացների արագացումը[2]:

Ագրարային բարեփոխումների շրջանակներում կառավարությունը շուկայական գնով գնել և գյուղացիներին 30 % ցածր գնով փոխանցել է հող՝ վճարումը հետաձգելով 25 տարով, գործնականում զրոյական տոկոսադրույքով, իսկ ֆինանսավորումն իրականացվում էր նավթադոլարների հաշվին: Երկու միլիոն գյուղացի ընտանիքներ (9 միլիոն մարդ, բնակչության մոտ 40 %–ը) դադարում են «ճորտեր» լինել[3]: Իրականացված բարեփոխումների արդյունքում հոգևորական դասի տնտեսական իրավիճակը խարխլվել էր: 1975 թվականի սեպտեմբերի 22–ի դրությամբ, որը նախանշվում է որպես ագրարային բարեփոխումների գործնական ավարտ, արդեն բաշխվել էր 14,55 հազար հանրային վակֆներ[4], որոնք վարձակալվում էին 136,7 հազար ընտանիքի կողմից և ևս 2,4 հազար հանրային վակֆեր, որոնք վաճառվել էին

---

[1] Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, стр. 5-6, 22.

[2] Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, стр. 22, 25, 30.

[3] Александр Зотин, Николай Кожанов, Никита Филин, Цена суверенной теократии. Как Иран не стал сверхдержавой, Журнал "Коммерсантъ Деньги" № 39 от 06.10.2014, стр. 41.

[4] Վակֆ՝ իսլամադավան երկրներում ֆեոդալների և ունևոր հավատացյալների կողմից մզկիթներին, բարեգործական կամ ուսանողական հաստատություններին իբրև հավիտյան անօտարելի, չհարկվող սեփականություն նվիրած հողային տիրույթներ ու այլ եկամտաբեր գույք:

36 հազարի գյուղացիական ընտանիքների[1]:

Այնուամենայնիվ, ոչ բոլորը հող ստացան: Հողամասի իրավունք ունեին միայն նրանք, ովքեր ուղղակիորեն մշակում էին այն: Այս ամենի արդյունքում գյուղի սեզոնային աշխատողները ոչինչ չշահեցին, ինչի արդյունքում էլ ստիպված եղան տեղափոխվել արագ զարգացող քաղաքներ[2]:

Բարեփոխումներն ու նավթադոլարների ներհոսքը հանգեցրին Իրանի արագընթաց զարգացմանը: Շատ կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին ամբողջական ոլորտներ, ինչպիսիք են մետաղագործությունը, նավթաքիմիան, նավաշինությունն ու ավտոարդյունաբերությունը: Արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է՝ 27 %–ից հասնելով 72 %–ի. Իրանը դարձել էր աշխարհի 14–րդ տնտեսությունը, իսկ շահը նպատակ էր դրել մտնել լավագույն հնգյակ[3]: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ն 1962 թվականին կազմում էր 203 ԱՄՆ դոլար, ինչը 1976 թվականին հասել էր 2,017 ԱՄՆ դոլարի[4]:

Այսպիսով, ագրարային բարեփոխումները ստանձնեցին ինչպես 50-60–ական թվականների ընթացքում երկրում առաջացած սոցիալ-քաղաքական ու տնտեսական հակասությունները կանխելու խնդիրը, այնպես էլ բարենպաստ պայմաններ ապահովեցին գյուղատնտեսության ու ամբողջ ազգային տնտեսության առավել արագացված ու արդիականացված զարգացման համար:

Եթե 60-70–ական թվականների ագրարային բարեփոխումները դարձան Իրանի սոցիալ-տնտեսական համակարգը քիչ թե շատ համասեռ դարձնելու կարևորագույն գործոն, ապա արդյունաբերականացման արդյունքում ապահովվեցին երկրի աճն ու տնտեսական զարգացման բարձր տեմպերը: «Սպիտակ հեղափոխության» բարեփոխումներն ընդհանուր առմամբ նպատակ ունեին խարխլել սոցիալական և հասարակական կյանքի ավանդական ինստիտուտները՝ հիմք դնելով կառավարման կապիտալիստական ձևերին, որոնք արդեն իսկ մեծ տարածում էին գտել:

60–ական թվականների կեսերից սկսվեց արդյունաբերականացման նոր փուլը, որի ընթացքում էլ Իրանի տնտեսական համակարգում ներդրվեցին զարգացած գիտական և տեխնոլոգիական տարրեր: Մոհամմադ Ռեզայի օրոք՝ 1969-1979 թվականներին, սկիզբ դրվեց նաև բնակչության գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը: Նպատակն էր գրագիտության մակարակի շեշտակի բարձրացումը, ինչը, կառավարության կարծիքով, զգալիորեն կբարելավեր աշխատանքի որակը:

---

[1] Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, с. 31.

[2] Александр Зотин, Николай Кожанов, Никита Филин, Цена суверенной теократии. Как Иран не стал сверхдержавой, Журнал "Коммерсантъ Деньги" № 39 от 06.10.2014, стр. 41.

[3] Նույն տեղում:

[4] WB (2021). World Development Indicators Online (Last Updated: 09/15/2021), available at: https://databank.worldbank.org/source/world-development-indicators#

1970–ական թվականների ընթացքում Իրանի տնտեսական զարգացման գործում իր մեծ դերակատարությունն ուներ պետությունը: 1977-1978 թվականներին պետական հատվածն էր մեծապես ապահովում երկրի տնտեսական աճի բարձր տեմպերը, որի վառ ապացույցն էր նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի 116 % աճը: Երկրի տնտեսական զարգացման գործում պետության աճող դերն իր ազդեցությունն է ունենում նաև ՀՆԱ-ի կառուցվածքում:

1970-2019 թվականների ընթացքում Իրանում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճել է 6897 ԱՄՆ դոլարով (շուրջ 18,9 անգամ)՝ կազմելով 7282 ԱՄՆ դոլար[1]:

Կապիտալիզմի զարգացումը, որն ապահովվել էր ավտորիտար կառավարման միջոցով, մեկ ու կես տասնամյակ անց հենց այդ ավտորիտարիզմի պատճառով էլ սկսեց փլուզվել:

Արագացված տնտեսական աճի ապահովման գործում կառավարության միջամտության դրական ազդեցությունը 70-ականների վերջին փոխարինվեց բացասականով: Ազգային արտադրանքի աճի տեմպը կտրուկ նվազեց, աճեցին գնաճային գործընթացները: 1978 թվականի սեպտեմբերին տնտեսական և քաղաքական իրավիճակը դուրս եկավ կառավարության վերահսկողությունից[2]:

Այս պայմաններում իշխող ռեժիմի դեմ ընդդիմությունը գնալով աճում էր՝ ներգրավելով բնակչության ավելի լայն շերտերի: Կառավարությունից անկախ մնացել էր հոգևորականությունը, որն էլ առաջնորդեց իշխանության դեմ ուղղված պայքարը: «Սպիտակ հեղափոխությունը» ձախողվեց: Փոփոխությունները չափազանց արագ էին, բարեփոխումների ճանապարհին անտեսվեցին ազգային ու կրոնական առանձնահատկությունները, ինչի արդյունքում էլ հանդիպեցին հոգևորականության դիմադրությանը: 1979 թվականի սկզբին՝ շահի միապետության անկումից հետո, շիա հոգևորականությունը, օգտագործելով քաղաքական, գաղափարական և տնտեսական լծակները, մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում կարողացավ երկրում հաստատել աստվածապետական ռեժիմ: Այսպիսով, «Սպիտակ հեղափոխությանը» փոխարինեց «Իսլամական հեղափոխությունը»: Տեղի ունեցավ հանրաքվե, որի արդյունքում էլ հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը: 1979-1989 թվականները, համաձայն որոշ աղբյուրների, ընդունված է համարել «Իսլամական տնտեսության» կառուցման, իսկ որոշների

[1] WB (2021). World Development Indicators Online (Last Updated: 09/15/2021), available at: https://databank.worldbank.org/source/world-development-indicators#

[2] Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, стр. 61-62.

համաձայն էլ՝ «մեկուսացված տնտեսության» ժամանակաշրջան[1]:

Իրանի իսլամական ռեժիմի զարգացման տնտեսական մոդելը, հիմքում ունենալով «խառը տնտեսության» սկզբունքները, կողմնորոշում ուներ դեպի պետական հատվածը: Կառավարությունը գիտությունն ու տեխնոլոգիան համարում էր երկրի զարգացման և առաջընթացի ամենակարևոր գործոններից: Եվ ահա 1979 թվականին՝ հեղաթոխության հաղթանակից հետո, սկսեց ձևավորվել երկրի գիտական քաղաքականությունը, որը բաժանվում է երեք փուլերի: Առաջին փուլի ընթացքում՝ 1979-1988 թվականներին, պետությունն իր ուշադրությունը կենտրոնացրել էր հանրային տարրական կրթության վրա: Երկրորդ փուլի ընթացքում՝ 1989–2000 թվականներին, գիտական քաղաքականություն մշակողները շեշտը դրել էին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների առկայության վրա: Երրորդ փուլի ընթացքում՝ 2005–2015 թթ., գիտական քաղաքականությունը կենտրոնացած էր հետբուհական կրթական ծրագրերի թվի ավելացման, ինչպես նաև հիմնական ու կիրառական հետազոտությունների խթանման վրա[2]:

Ինչպես գիտենք, գիտության և տեխնոլոգիայի ոլորտում առաջընթացն անհնար է առանց մասնագետների և բարձր որակավորում ունեցող անձնակազմի: Այդ իսկ պատճառով Իրանի Իսլամական Հանրապետությունն իր ստեղծման օրվանից՝ 1979 թվականից ի վեր ընդլայնել և խորացրել է համընդհանուր կրթությունը դպրոցներում և համալսարաններում՝ վերջին քառասուն տարիների ընթացքում ունենալով բազմաթիվ ձեռքբերումներ: Այս ճանապարհին առաջին քայլը, իհարկե, կատարել է Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր Իմամ Խոմեյնին: Հասարակության մեջ անգրագիտությանը վերջ տալու համար հեղափոխության հաղթանակի հենց առաջին տարում ստեղծվեց «Շարժում հանուն գրագիտության» կազմակերպությունը, որի նպատակն էր վերացնել հասարակության անգրագիտությունը[3]:

Գիտատեխնիկական զարգացման ժամանակակից շրջափուլի սկիզբը կարելի է համարել 2000 թվականը, որը համընկնում է նաև երկրի զարգացման երրորդ հնգամյա ծրագրի ընդունմամբ (2001-2005 թթ.), որում առաջին անգամ առանձին գլուխ էր հատկացված գիտության և տեխնոլոգիայի ոլորտի զարգացմանը[4]:

---

[1] Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997, стр. 63-65.

[2] The Development of Science and Technology in Iran, Policies and Learning Frameworks; Edited by Abdol S. Soofi & Mehdi Goodarzi. Chapter 5 // Mohammad Naghizadeh, Reza Naghizdeh // Growth of Scientific Publications in Iran: Reasons, Impacts, and Trends, 5.1 Analysis of Growth Rate of Scientific Output in Iran During the Last Two Decades, 2017, pp. 81-82.

[3] UNESCO Institute for Lifelong Learning, Literacy Movement Organization (LMO), https://uil.unesco.org/partner/lifelong-learning/literacy-movement-organization-lmo (last accessed: September 15, 2021)

[4] Малахов В.А., Юревич М.А., Аушкап Д.С., Иран: Позитивный опыт развития науки и технологий //

Կառավարությունը որոշում կայացրեց ռեսուրսների վրա հիմնված տնտեսությունից անցում կատարել դեպի գիտելիքահենք տնտեսության 2005 թվականին ընդունված 20-ամյա «Տեսլական 2025» ծրագրում: Այս անցումը դարձավ առաջնահերթ այն բանից հետո, երբ 2006 թվականից աստիճանաբար ներդրվեցին միջազգային պատժամիջոցները, և է՛լ ավելի խստացան նավթային էմբարգոյի (բեռնարգելքի) սահմանափակումները: Երկրի համար մշակվել էր նոր տնտեսական ծրագիր, որը կոչում էին նաև «դիմադրողական տնտեսություն», որի համաձայն խթանվում էր նորարարությունը՝ նվազեցնելով կախվածությունը ներմուծումից[1]:

«Տեսլական 2025-ը» նախատեսում էր 3,7 տրիլիոն ԱՄՆ դոլարի ներդրում՝ մինչև 2025 թվականը գիտելիքահենք տնտեսությանն անցումը ֆինանսավորելու համար: Գումարի մեծ մասը ծառայելու էր գիտահետազոտական կազմակերպությունների կողմից հետազոտությունների իրականացմանն ու ստացված արդյունքների առևտրայնացմանը: Իսկ ահա կարևորագույն դրույթներից մեկի համաձայն՝ մինչև 2025 թվականը քաղաքական գործիչներից ծրագրով պահանջվում էր դուրս գալ արդյունահանող արդյունաբերությունից և միջոցները կենտրոնացնել երկրի մարդկային կապիտալի վրա՝ իրական հարստություն ստեղծելու նպատակով: Տեսլականի ընդունումից անմիջապես հետո ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ՝ մի կողմից համալսարանների ուսանողների և դասախոսների թվաքանակն ավելացնելու, մյուս կողմից՝ երկրում ծառացած խնդիրների լուծման և արդյունաբերական հետազոտությունների խթանման համար[2]:

Օրինակ՝ ապահովելու համար, որ ակադեմիական հետազոտությունների 50 %-ը ուղղված լինի սոցիալ-տնտեսական կարիքների և խնդիրների լուծմանը, տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով (2010–2015) առաջընթացն ուղղակի կապի մեջ էր դրվել հետազոտական նախագծերի հետ: Համաձայն 2010-2015 հնգամյա ծրագրի՝ նախատեսվում էր գիտահետազոտական և տեխնոլոգիական կենտրոններ ստեղծել համալսարաններում, ինչպես նաև ընձեռել հնարավորություններ, որպեսզի համալսարանները կարողանան զարգացնել արդյունաբերության հետ կապերը: Հնգամյան ծրագրի շրջանակում ստեղծվեց նաև Ազգային զարգացման հիմնադրամը, որի նպատակն էր ֆինանսավորել տնտեսության բազմակողմանի զարգացումը: Մինչև 2013 թվականը հիմնադրամը ստանում էր նավթից ու գազից ստացվող եկամուտների 26 % -ը: Ծրագրվում էր նաև 2015 թվականին Իրանը դարձնել

Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, стр 116.

[1] UNESCO SCIENCE REPORT Towards 2030; 2015, Иран, Киумарс Аштариан// ISBN 978-92-3-100129-1, стр. 389-391, https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf (последнее обращение: 18 сентября 2021 г.)

[2] UNESCO SCIENCE REPORT Towards 2030; 2015, Иран, Киумарс Аштариан // ISBN 978-92-3-100129-1, стр. 392-394, https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf (последнее обращение: 18 сентября 2021 г.)

տարածաշրջանում գիտության և տեխնոլոգիաների ոլորտի երկրորդ խոշոր խաղացողը՝ Թուրքիայից հետո: Այդ նպատակով կառավարությունն իր վրա պարտավորություն էր վերցրել ավելացնել երկրի ներսում իրականացվող հետազոտությունների ծավալը՝ ծախսելով ՀՆԱ -ի մինչև 3 %-ը[1]:

Կառավարության վարած գիտական քաղաքականության արդյունքում Իրանն իսկապես զգալի հաջողությունների է հասել: Այսպիսով, 2000–2016 թվականներին իրանցիների կողմից գրանցված արտոնագրերի թիվն ավելացել է ավելի քան 13 անգամ (241-ից հասնելով 3155-ի)[2]: Հիացական է նաև գիտական զարգացումը, քանի որ արդեն 2019 թվականին Իրանը գիտական-հետազոտական ակտիվության մակարդակով զբաղեցնում էր 15-րդ հորիզոնականն աշխարհում՝ իր հաշվում ունենալով 48306 գիտական հոդված[3]:

Երկրի գիտական մակարդակը ցույց տվող կարևորագույն չափանիշներից մեկը գիտնականների՝ հեղինակավոր գիտական աղբյուրներում հրապարակած հոդվածներն են: Մալախովը և այլք Web of Science շտեմարանի տվյալների հիման վրա ներկայացնում են, որ 2000-2016 թվականների ընթացքում իրանցի հետազոտողների կողմից գիտական հրապարակումների թիվը քսանապատիկ աճել է: Թեև, ի տարբերություն զարգացած մի շարք երկրների, Իրանի գիտական գործունեությունը դեռևս չափազանց մեծ չէ, այնուամենայնիվ կարևոր է, որ հոդվածների ընդհանուր աճը մեծապես պայմանավորված է Q1 գործակից ունեցող ամսագրերում հրապարակված նյութերով: Այսպիսով, 2000-2016 թվականների ընթացքում Q1 գործակից ունեցող ամսագրերում հրապարակումների թիվն ավելացել է 27 անգամ՝ 344-ից հասնելով 9619-ի: Սա վկայում է ինչպես ոլորտում քանակական փոփոխությունների, այնպես էլ գիտական գործընթացների ակտիվացման մասին[4]:

Այժմ առավել համապարփակ կերպով ուսումնասիրենք Իրանում գիտության ոլորտի կառավարման գործիքակազմերը: Եզրակացություններ, ինչպես նաև կիրառական բնույթի առաջարկներ ներկայացնելու նպատակով ուսումնասիրությունն իրականացնենք պարբերաբեր ՀՀ-ի հետ զուգահեռներ և համեմատականներ տանելու միջոցով:

ՀՀ-ում գիտության ոլորտի արագընթաց զարգացմանը խոչնդոտող պատճառներից է ոչ միայն ոլորտի ֆինանսավորման ցածր մակարդակը, այլ նաև

---

[1] UNESCO SCIENCE REPORT Towards 2030; 2015, Иран, Киумарс Аштариан // ISBN 978-92-3-100129-1, стр. 394-395, https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf (последнее обращение: 18 сентября 2021 г.)

[2] Малахов В.А., Юревич М.А., Аушкап Д.С., Иран: Позитивный опыт развития науки и технологий // Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, стр. 117.

[3] Рейтинг стран мира по уровню научно-исследовательской активности / Scientific and Technical Activity, Гуманитарный портал, *ISSN* 2310-1792, 2019, https://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity (последнее обращение: 18 сентября 2021 г.)

[4] Малахов В.А., Юревич М.А., Аушкап Д.С., Иран: Позитивный опыт развития науки и технологий // Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, с. 117.

կառավարման անարդյունավետ մոդելն ու համապատասխան գերատեսչությունների ոչ հետևողական վերաբերմունքը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գիտության ոլորտին վերաբերող վիճակագրական տվյալներ գոյություն չունեն ինչպես տեղական աղբյուրներում, այնպես էլ, օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի (UIS) տվյալների շտեմարանում, որը պաշտոնական և վստահելի աղբյուր է, և որտեղ ներկայացված են աշխարհի տարբեր երկրների կրթության, գիտության, մշակույթի և հաղորդակցության վերաբերյալ միջազգայնորեն համադրելի տվյալներ[1]:

Իրանի գիտական կազմակերպությունները, մասնավորապես՝ Գիտության և տեխնոլոգիաների հետազոտական կազմակերպությունն ու Գիտական քաղաքականության հետազոտությունների ազգային ինստիտուտը, գտնվում են գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության ենթակայության ներքո, որն էլ զբաղվում է ոլորտին վերաբերող բոլոր հարցերով ու խնդիրներով, ինչի շնորհիվ էլ բացառվում է երկակի ու հակադրվող նպատակների սահմանումը: Նրանք են պատասխանատու ազգային հետազոտական քաղաքականության մշակման համար:

Իրանում գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետագիծն ու հեռանկարները որոշվում են ռազմավարական փաստաթղթերում, որոնցից մեկն էլ Գիտության և տեխնոլոգիաների համապարփակ քաղաքականությունն է՝ «Տեսլական 2025-ը», որում պարտադիր կերպով նշված են նախատեսվող միջոցառումների իրականացման արդյունքում ձեռք բերվելիք թիրախային ցուցանիշները: Երկրում հիմնական ռազմավարական փաստաթղթերը կազմվում են՝ հաշվի առնելով հետազոտությունների և զարգացման ներքին ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում[2]:

Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ, ի տարբերություն Իրանի, որտեղ նախատեսվում է տարեցտարի ավելացնել հետազոտությունների և զարգացման ներքին ծախսերը, ՀՀ-ում գիտության ոլորտի ծախսային ծրագրով նախատեսվում է կրճատել հատկացվող միջոցները՝ 2021-2023 թվականների, ըստ տարիների՝ 13,753.6, 13,434.7 և 13,437.4 միլիոն դրամ՝ 2020 թվականի 14,255.3 միլիոն դրամի դիմաց, կամ, 2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշի համեմատ, նվազումը կազմում է, համապատասխանաբար, 3,5 %, 5,8 % և 5,7 %[3]:

Բացի գիտության ոլորտի զարգացումը կարգավորող ռազմավարական փաստաթղթերի մշակումից և ընդունումից, պետական մարմինների գործառույթների մեջ է մտնում նաև բյուջետային միջոցների ծախսման արդյունա-

---

[1] Աղբյուրը՝ http://data.uis.unesco.org/Index.aspx

[2] Малахов В.А., Юревич М.А., Аушкап Д.С., Иран: Позитивный опыт развития науки и технологий // Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, стр. 118.

[3] Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 83, http://scs.am/files/mjcc-21-23-10.07.2020-1212-hav.pdf

վետության գնահատումը: Իրանում գիտահետազոտական գործունեություն ծավալող կազմակերպություններից պահանջվում է Գիտության և տեխնոլոգիայի ազգային տեղեկատվական համակարգին ներկայացնել հաշվետվություններ՝ մի քանի տասնյակ ցուցանիշների վերաբերյալ: Գիտաչափական տեղեկատվություններ են հանդիսանում մեջբերումների ինդեքսները, հրապարակումների թիվը և այլն, որոնք վերանայվում է Գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների գերագույն խորհրդի կողմից, և արդյունքում այն որոշում է կայացնում կազմակերպությունների նկատմամբ խրախուսական կամ սահմանափակող միջոցառումների վերաբերյալ: Գիտության կառավարման իրանական մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ շեշտադրումն ընկնում է համալսարանների վրա: Այս մասին է վկայում գիտական հրապարակումների վիճակագրությունը: Համալսարանները դիտարկվում են որպես գիտության հիմնական շարժիչ ուժեր, և Իրանի կառավարությունը կարողացել է ժամանակի ընթացքում ճիշտ ռազմավարություն մշակել՝ ուշադրության կենտրոնում պահելով համալսարանների գործունեությունը:

Իրանի կառավարությունը նաև տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում գիտական կազմակերպություններին: Մասնավորապես՝ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության կայքում առկա է պետական գիտական կազմակերպությունների վերաբերյալ բոլորին հասանելի տեղեկագիր, որը պարունակում է անգլերեն լեզվով տեղեկատվություն գիտության տարբեր ոլորտներում մասնագիտացած ավելի քան 300 գիտական կազմակերպությունների վերաբերյալ: Գիտահետազոտական ինստիտուտների և խմբերի վերաբերյալ հիմնական տեղեկատվության անվճար հասանելիությունն օգնում է կազմակերպել համատեղ աշխատանք ներքին և միջազգային ոլորտում, ներգրավել մասնավոր ընկերություններին՝ հետազոտություններ ֆինանսավորելու և հետազոտությունների արդյունքների առևտրայնացման նպատակով[1]:

Տնտեսության զարգացման համար սկզբունքորեն կարևոր է, որ ոչ միայն բարձրորակ գիտական հոդվածներ գրվեն երկրում, այլ նաև լինեն զարգացած նորարարական ենթակառուցվածքներ, որոնք կնպաստեն տնտեսության իրական հատվածում գիտական արդյունքների ներդրմանը: Իրանում այս գործընթացն իրականացնում են մի շարք կառույցներ, այդ թվում՝ պետական կազմակերպություններ, մասնավոր ձեռնարկություններ, համալսարաններ, տեխնոլոգիական շուկաներ (INOTEX, TTEN), տեխնոլոգիական պարկեր ու ինկուբատորներ[2]:

---

[1]https://www.msrt.ir/file/download/page/1479899553-directory-of-iranian-research-development-institutions.pdf

[2] Малахов В.А., Юревич М.А., Аушкап Д.С., Иран: Позитивный опыт развития науки и технологий // Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, стр. 120.

Այսպիսով, հարկ է նշել, որ նորարարական ենթակառուցվածքների ստեղծումը մեծ առաջընթաց էր Իրանի համար, ինչի շնորհիվ հնարավոր եղավ գիտական հետազոտությունների արդյունքները ներդնել նաև տնտեսության իրական հատվածում:

Վերլուծելով Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցող տնտեսաքաղաքական զարգացումներն ու ծրագրային որոշումները, մասնավորապես՝ «Տեսլական 2025» ծրագրով երկրի զարգացումն ու առաջընթացն ապահովող կարևորագույն դրույթները՝ ***ստացվել են հետևյալ երկու գիտական նորույթները.***

1) հաշվի առնելով գիտակրթական ոլորտին առնչվող վիճակագրական տվյալների կարևորությունը՝ մեկ միասնական մարմնի կազմում ստեղծել տվյալների հավաքագրմամբ ու մշակմամբ զբաղվող ստորաբաժանում,

2) հիմք ընդունելով Իրանում առկա նորարարական ենթակառուցվածքների արդյունավետությունը՝ ՀՀ գիտության ոլորտում նույնպես ներդնել նմանատիպ ենթակառուցվածքներ, որոնք մեծապես կնպաստեն գիտական արդյունքների առևտրայնացմանն ու համապատասխան ոլորտներում դրանց կիրարկմանը:

Եզրակացություններ

Չնայած տնտեսական ծանր վիճակին՝ Իրանը վերջին տասնամյակների ընթացքում գիտական և տեխնոլոգիական ոլորտում մեծ աճ ու ձեռքբերումներ է ունեցել: Իրանի տնտեսական զարգացման պատմությունն ուսումնասիրելիս նկատելի է, որ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր է եղել պետական իշխանության ազդեցությունը: Դրանցից ամենանշանակալին երկրի համար դարձավ «Իսլամական հեղափոխությունը»: Հեղափոխությունից հետո մշակված զարգացման ծրագրերով կառավարությունը սկսեց ուշադրությունը կենտրոնացնել մարդկային կապիտալի վրա՝ իրական հարստություն ստեղծելու նպատակով: Կարևորվում էր արդյունաբերական ներուժը՝ ներառյալ տեխնոլոգիական մակարդակի բարձրացումն ու գիտության ոլորտի առաջընթացը: Վիճակագրական տվյալների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ Իրանում մշակված զարգացման ռազմավարական ծրարգերը, մասնավորապես՝ «Տեսլական 2025-ը» չի դարձել դեկլարատիվ կամ «թղթային», այլ հանգեցրել է էական որակական փոփոխությունների գիտության ոլորտում: Կարելի է փաստել՝ Իրանի գիտատեխնիկական զարգացման վերլուծությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ միանգամայն հնարավոր է նորարարական բեկումնային ձեռքբերումներ ունենալ նույնիսկ շատ համեստ մեկնարկային դիրքերով և միջազգային պատժամիջոցների ներքո:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարելու ստորև բերվող 3 կիրառական առաջարկությունները, որոնք հնարավոր է գործարկել Հայաստանում.

1) կրթական ու գիտահետազոտական բոլոր կազմակերպությունները

փոխադրել մեկ միասնական մարմնի ենթակայության ներքո՝ ստեղծելով ոլորտին առնչվող վիճակագրական տվյալների հավաքագրմամբ ու մշակմամբ զբաղվող ստորաբաժանում,

2) մշակել համապատասխան օրենսդրական կարգավորումներ, համաձայն որոնց՝ ՀՀ-ում գործող համալսարանները նույնպես դիտարկվեն որպես գիտական գործունեություն ծավալող կարևորագույն օղակներ՝ պարտավորված լինելով իրականացնել գիտահետազոտական գործունեություն, որոնց արդյունքները կլինեն չափելի ու հիմք կհանդիսանան երկրի տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման համար,

3) մշակել ու ներդնել նորարարական ենթակառուցվածքներ, որոնք կապահովեն գիտահետազոտական կենտրոնների ու տնտեսության իրական հատվածի միջև կապը, կնպաստեն գիտական արդյունքների առևտրայնացմանն ու համապատասխան ոլորտներում դրանց գործարկմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, http://scs.am/files/mjcc-21-23-10.07.2020-1212-hav.pdf
2. Александр Зотин, Николай Кожанов, Никита Филин, Цена суверенной теократии. Как Иран не стал сверхдержавой, Журнал "Коммерсантъ Деньги" № 39 от 06.10.2014, стр. 41
3. Арабаджян А.З., Исламская Республика Иран : Эконом. потенциал: первая половина 90-х г. : (Со стат. обозрением второй половины десятилетия и общ. характеристикой Третьего плана развития ИРИ: 2000/01-2004/05 гг.) / А. З. Арабаджян; Рос. акад. наук. Ин-т востоковедения. М. : Вост. лит., 2002, 382 с. ISBN 5-02-018307-5 (в пер.)
4. В. Малахов, М. Юревич, Д. Аушкап, Иран: Позитивный опыт развития науки и технологий // Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 11, с. 116-124, https://e.mail.ru/attach/16317926690324304962/0%3B2/?folder-id=0&x-email=tatev.shahinyan%40mail.ru&cvg=nsng
5. Демин А.И., Современная иранская деревня: (Основные проблемы соц.-экон. развития) / АН СССР. Ин-т востоковедения. Москва : Наука, 1977, 278 с.
6. Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии / Н. М. Мамедова; Ин-т изучения Израиля и Ближ. Востока. М.: Ин-т изучения Израиля и Ближ. Востока, 1997. 144 с. ISBN 5-89394-007-5
7. Насирбейк Анахита, Этапы развития экономики Ирана, Горизонты экономики, ISSN: 2219-3650, Москва, номер 6 (53), 2019, стр. 61-66
8. Рейтинг стран мира по уровню научно-исследовательской активности / Scientific and Technical Activity, Гуманитарный портал, ISSN 2310-1792, 2019, https://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity
9. Ghodsi, M., Astrov, V., Grieveson, R. and Stehrer, R. (2018). The Iranian Economy:

Challenges and Opportunities. wiiw Research Report No. 429, Vienna: The Vienna Institute for International Economic Studies. 63 p. Available at: https://wiiw.ac.at/the-iranian-economy-challenges-and-opportunities-dlp-4599.pdf (last accessed: September 15, 2021)
10. Mohammad Naghizadeh, Reza Naghizdeh // Chapter 5 // Growth of Scientific Publications in Iran: Reasons, Impacts, and Trends, 5.1 Analysis of Growth Rate of Scientific Output in Iran During the Last Two Decades, 2017, pp. 75-87// Edited by Abdol S. Soofi & Mehdi Goodarzi // The Development of Science and Technology in Iran,Policies and Learning Frameworks
11. Soofi, A. S., & Ghazinoory, S. (Eds.). (2013). Science and Innovations in Iran. Development, Progress, and Challenges. New York, NY: Palgrave Macmillan, 259 p. doi:10.1057/9781137030108
12. Soofi, A. S., & Goodarzi, M. (Eds.). (2017). The Development of Science and Technology in Iran: Policies and Learning Frameworks. New York, NY: Palgrave Macmillan, 302 p. doi:10.1057/978-1-137-57257-8
13. UNESCO SCIENCE REPORT Towards 2030; 2015, Iran, Kioomars Ashtarian // ISBN 978-92-3-100129-1, pp. 388-407, https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf (последнее обращение: 18 сентября 2021 г.)
14. Zotin, A. (2017) Iran: The Fruits of Isolation. In Movchan, A., Zotin, A., and Grigoryev, V. (eds.), Managing the Resource Curse Strategies of Oil-Dependent Economies in the Modern Era, pp. 80-89, Moscow, Russia: Carnegie Moscow Center. Available at: https://carnegieendowment.org/files/Movchan_Report_Final_Print.pdf (last accessed: September 15, 2021)
15. UNESCO Institute for Lifelong Learning, Literacy Movement Organization (LMO), https://uil.unesco.org/partner/lifelong-learning/literacy-movement-organization-lmo
16. WB (2021). World Development Indicators Online (Last Updated: 09/15/2021), available at: https://databank.worldbank.org/source/world-development-indicators
17. http://data.uis.unesco.org/Index.aspx
18. https://www.isi-science.com/
19. https://www.msrt.ir/file/download/page/1479899553-directory-of-iranian-research-development-institutions.pdf
20. https://www.worldbank.org/en/home

References

1. Aleksandr Zotin, Nikolaj Kozhanov, Nikita Filin, Cena suverennoj teokratii. Kak Iran ne stal sverhderzhavoj, Zhurnal "Kommersant" Den'gi" #39 ot 06.10.2014, str. 41
2. Hayastani Hanrapetowt'yan 2021-2023 t'vakanneri petakan mijnajhamket c'axseri c'ragir, http://scs.am/files/mjcc-21-23-10.07.2020-1212-hav.pdf
3. Arabadzhjan A.Z., Islamskaja Respublika Iran : Jekonom. potencial: pervaja polovina

90-h g. : (So stat. obozreniem vtoroj poloviny desjatiletija i obshh. harakteristikoj Tret'ego plana razvitija IRI: 2000/01-2004/05 gg.) / A. Z. Arabadzhjan; Ros. akad. nauk. In-t vostokovedenija. M. : Vost. lit., 2002. 382 s. ISBN 5-02-018307-5 (v per.)
4. V. Malahov, M. Jurevich, D. Aushkap, Iran: Pozitivnyj opyt razvitija nauki i tehnologij // Mirovaja jekonomika i mezhdunarodnye otnoshenija, 2018, tom 62, # 11, s. 116-124, https://e.mail.ru/attach/16317926690324304962/0%3B2/?folder-id=0&x-email=tatev.shahinyan%40mail.ru&cvg=nsng
5. Demin A.I., Sovremennaja iranskaja derevnja: (Osnovnye problemy soc.-jekon. razvitija) / AN SSSR. In-t vostokovedenija. Moskva : Nauka, 1977, 278 s.
6. Mamedova N.M., Iran v XX veke. Rol' gosudarstva v jekonomicheskom razvitii / N. M. Mamedova; In-t izuchenija Izrailja i Blizh. Vostoka. M.: In-t izuchenija Izrailja i Blizh. Vostoka, 1997, 144 s. ISBN 5-89394-007-5
7. Nasirbejk Anahita, Jetapy razvitija jekonomiki irana, Gorizonty jekonomiki, ISSN: 2219-3650, Moskva, nomer 6 (53), 2019, str. 61-66
8. Rejting stran mira po urovnju nauchno-issledovatel'skoj aktivnosti / Scientific and Technical Activity, Gumanitarnyj portal, ISSN 2310-1792, 2019, https://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity
9. Ghodsi, M., Astrov, V., Grieveson, R. and Stehrer, R. (2018). The Iranian Economy: Challenges and Opportunities. wiiw Research Report No. 429, Vienna: The Vienna Institute for International Economic Studies. 63 p. Available at: https://wiiw.ac.at/the-iranian-economy-challenges-and-opportunities-dlp-4599.pdf (last accessed: September 15, 2021)
10. Mohammad Naghizadeh, Reza Naghizdeh // Chapter 5 // Growth of Scientific Publications in Iran: Reasons, Impacts, and Trends, 5.1 Analysis of Growth Rate of Scientific Output in Iran During the Last Two Decades, 2017, pp. 75-87// Edited by Abdol S. Soofi & Mehdi Goodarzi // The Development of Science and Technology in Iran, Policies and Learning Frameworks
11. Soofi, A. S., & Ghazinoory, S. (Eds.). (2013). Science and Innovations in Iran. Development, Progress, and Challenges. New York, NY: Palgrave Macmillan, 259 p. doi:10.1057/9781137030108
12. Soofi, A. S., & Goodarzi, M. (Eds.). (2017). The Development of Science and Technology in Iran: Policies and Learning Frameworks. New York, NY: Palgrave Macmillan, 302 p. doi:10.1057/978-1-137-57257-8
13. UNESCO SCIENCE REPORT Towards 2030; 2015, Iran, Kioomars Ashtarian // ISBN 978-92-3-100129-1, pp. 388-407, https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf (последнее обращение: 18 сентября 2021 г.)
14. Zotin, A. (2017) Iran: The Fruits of Isolation. In Movchan, A., Zotin, A., and Grigoryev, V. (eds.), Managing the Resource Curse Strategies of Oil-Dependent Economies in the Modern Era, pp. 80-89, Moscow, Russia: Carnegie Moscow Center. Available at: https://carnegieendowment.org/files/Movchan_Report_Final_Print.pdf (last

accessed: September 15, 2021)
15. UNESCO Institute for Lifelong Learning, Literacy Movement Organization (LMO), https://uil.unesco.org/partner/lifelong-learning/literacy-movement-organization-lmo
16. WB (2021). World Development Indicators Online (Last Updated: 09/15/2021), available at: https://databank.worldbank.org/source/world-development-indicators
17. http://data.uis.unesco.org/Index.aspx
18. https://www.isi-science.com/
19. https://www.msrt.ir/file/download/page/1479899553-directory-of-iranian-research-development-institutions.pdf
20. https://www.worldbank.org/en/home

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

Համառոտագիր: Երկրի աշխարհաքաղաքական դիրքով և առանձնահատկություններով պայմանավորված՝ Իրանը մշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Հոդվածի նպատակն է՝ ուսումնասիրել տարբեր պատմական ժամանակաշրջաններում պետության կողմից կիրառվող այն գործիքակազմերը, որոնք նպաստել են երկրի գիտության ոլորտի զարգացմանը, ինչպես նաև մշակել ՀՀ համար համապատասխան կիրառական առաջարկներ:

Օգտագործվելով գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները՝ հոդվածի շրջանակում ուսումնասիրվել են Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցած տնտեսաքաղաքական գործընթացներն, ու դրանց համատեքստում՝ գիտության ոլորտի զարգացումը: Ուշադրության կենտրոնում են եղել Իրանում տեղի ունեցած հեղափոխությունն ու հետհեղափոխական ժամանակաշրջանում երկրի զարգացմանն ուղղված միջոցառումները: Վերլուծվել է 2005 թվականին ընդունված երկրի զարգացման 20-ամյա «Տեսլական 2025» ծրագիրը, մասնավորապես՝ դրանում տեղ գտած այն հիմնական դրույթները, որոնք ուղղված էին գիտության ոլորտի զարգացմանը: Հատկապես շեշտադրվել են այն գործիքակազմերը, որոնց կիրառությունը դրական ազդեցություն է ունեցել ոլորտի զարգացման վրա: Հարկ է նշել, որ կառավարության վարած գիտական քաղաքականության արդյունքում մեծապես ավելացել է գիտության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտի ակտիվությունը: Ավելացել է նաև գիտնականների՝ հեղինակավոր գիտական աղբյուրներում հրապարակած հոդվածների թվաքանակը, որն էլ իր հերթին գիտական մակարդակը ցույց տվող կարևորագույն չափանիշներից մեկն է:

Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում կատարվել են ՀՀ-ում՝ գիտության ոլորտի զարգացմանն ուղղված առաջարկներ, այն է՝

ոլորտը կարգավորող մեկ միասնական մարմնի ենթակայության ներքո՝ ոլոռին առնչվող վիճակագրական տվյալների հավաքագրմամբ ու մշակմամբ զբաղվող ստորաբաժանման ստեղծումը, համալսարանների գործունեության նկատմամբ լրացուցիչ վերահսկողության սահմանումն ու նորարարական ենթակառուցվածքների ներդրումը, որոնց շնորհիվ Իրանում հնարավոր դարձավ գիտական հետազոտությունների արդյունքների ներդրումը նաև տնտեսության իրական հատվածում:

Վերլուծելով Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցող տնտեսաքաղաքական զարգացումներն ու ծրագրային որոշումները, մասնավորապես՝ «Տեսլական 2025» ծրագրով երկրի զարգացումն ու առաջընթացն ապահովող կարևորագույն դրույթները, ***ստացվել են հետևյալ երկու գիտական նորույթները.***

1) հաշվի առնելով գիտակրթական ոլորտին առնչվող վիճակագրական տվյալների կարևորությունը՝ մեկ միասնական մարմնի կազմում ստեղծել տվյալների հավաքագրմամբ ու մշակմամբ զբաղվող ստորաբաժանում,

2) հիմք ընդունելով Իրանում առկա նորարարական ենթակառուցվածքների արդյունավետությունը՝ ՀՀ գիտության ոլորտում նույնպես ներդնել նմանատիպ ենթակառուցվածքներ, որոնք մեծապես կնպաստեն գիտական արդյունքների առևտրայնացմանն ու համապատասխան ոլորտներում դրանց կիարկմանը:

Բանալի բառեր՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, տնտեսաքաղաքական զարգացումներ, հեղափոխություն, գիտելիքահենք տնտեսություն, գիտության ոլորտ, տեխնոլոգիաների զարգացում, գիտական հրապարակումներ, նորարարական ենթակառուցվածքներ

СФЕРА НАУКИ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ИРАН В КОНТЕКСТЕ ЭКОНОМИКО-ПОЛИТИЧЕСКОГО РАЗВИТИЯ

ТАТЕВИК ШАГИНЯН

Аннотация. В связи с геополитическим положением и особенностями страны, Иран всегда был в центре внимания исследователей.

Целью статьи является изучение инструментов, используемых государством в разные исторические периоды, которые способствовали развитию научного сектора страны, а также разработка актуальных практических предложений для Республики Армения.

В статье, с использованием научно-историко-логических, а также аналитико-синтетических методов, исследуются экономические и политические процессы в Исламской Республике Иран и развитие науки в этом контексте. Акцент был сделан на революцию в Иране и развитие страны в послереволюционный период. Принятая в 2005 году 20-летняя программа развития страны «Видение 2025» была проанализирована, в частности, содержащиеся в ней основные положения, направлены на

развитие области науки. Особое внимание было уделено механизмам, использование которых положительно повлияло на развитие отрасли. Следует отметить, что в результате научной политики, проводимой правительством, значительно возросла активность в области развития науки и технологий. Также увеличилось количество статей, публикуемых учеными в авторитетных научных источниках, что, в свою очередь, является одним из важнейших критериев демонстрации научного уровня.

В результате исследований и анализа были сделаны предложения, направленные на развитие области науки в Армении: под эгидой единого регулирующего сферу органа создание подразделения по сбору и обработке статистики, относящейся к сфере, установление дополнительного контроля над деятельностью университетов и внедрение инновационной инфраструктуры, что позволило возможность внедрение результатов научных исследований в реальный сектор экономики.

Анализируя экономические и политические события и программные решения, происходящие в Исламской Республике Иран, в частности, ключевые положения, обеспечивающие развитие и прогресс страны в рамках программы «Видение 2025», ***были получены следующие две новизны:***

1) учитывая важность статистических данных, относящихся к научно-образовательной сфере, создать подразделение, занимающееся сбором и обработкой данных в рамках единого органа,

2) основываясь на эффективности существующих инновационных инфраструктур в Иране, внедрить аналогичные инфраструктуры в области науки Республики Армения, что внесет большой вклад в коммерциализацию научных результатов и их внедрение в соответствующих областях.

Ключевые слова: Исламская Республика Иран, Республика Армения, экономико-политические развитие, революция, экономика знаний, область науки, развитие технологий, научные публикации, инновационная инфраструктура

SCIENTIFIC FIELD OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN IN THE CONTEXT OF ECONOMIC-POLITICAL DEVELOPMENT

TATEVIK SHAHINYAN

Abstract: Due to the geopolitical position and characteristics of the country, Iran has always been the focus of researchers.

The purpose of the article is to study the tools used by the state in different historical periods that contributed to the development of the country's science, as well as to develop appropriate applied proposals for Armenia.

In the article, using scientific-historical-logical, as well as analytical-synthetic methods, the economic and political processes in the Islamic Republic of Iran and the development of science in their context was explored. Emphasis was placed on the revolution in Iran and the country's development in the post-revolutionary period. The 20-year program of the country's development "Vision 2025" adopted in 2005 was analyzed, in particular, the main provisions contained in it, aimed at the development of the field of science. Particular attention was paid to the mechanisms, the use of which had a positive impact on the development of the industry. It should be noted that as a result of the scientific policy pursued by the government, activity in the development of science and

technology has significantly increased. The number of articles published by scientists in authoritative scientific sources has also increased, which, in turn, is one of the most important criteria for demonstrating scientific level.

As a result of research and analysis proposals for the development of science in Armenia have been submitted. That is, under the auspices of a single regulatory body for the sphere, the creation of a unit for the collection and processing of statistics related to the sphere, the establishment of additional control over the activities of universities and the introduction of innovative infrastructure, which made it possible to introduce the results of scientific research into the real sector of the economy.

Analyzing the economic and political events and policy decisions taking place in the Islamic Republic of Iran, in particular, the key provisions ensuring the development and progress of the country within the framework of the «Vision 2025» program, ***the following two novelties were obtained:***

1) Considering the importance of statistical data related to the scientific and educational field, create a unit dealing with the collection and processing of data within a single body.

2) Based on the effectiveness of the existing innovative infrastructures in Iran, introduce similar infrastructures in the field of science in the Republic of Armenia, which will greatly contribute to the commercialization of scientific results and their implementation in the relevant fields.

Keywords: Islamic Republic of Iran, Republic of Armenia, economic-political development, revolution, knowledge economy, science, technology development, scientific publications, innovation infrastructure